



2016թ.-ի մայիսի 8-ին Հաղպատում հանդիպեցին «Երիտասարդության ծայնը հանուն զարգացման և փոփոխությունների» հայ-վրացական միջսահմանային ծրագրի մասնակից հայ և վրացի ուսանողները, երկու կողմի դպրոցների տնօրեններն ու ուսուցիչները, ինչպես նաև ծրագրի ղեկավարները: Ծրագրի շրջանակներում առաջին անգամն էր, երբ ծրագրի մասնակիցները հանդիպում էին ամբողջ կազմով: Նախ մասնակիցներին ներկայացվեց ծրագրի նպատակը. յուրաքանչյուր երկիրը ներկայացուցիչ դպրոց պետք է ընտրեր իր հետ համագործակցող դպրոց և համատեղ մշակեր ծրագրի շրջանակներում իրենց դպրոցներում իրականացվող գործողությունների հստակ պլան և նպատակ:



Մասնակիցները ծանոթացան միմյանց հետ, նրանցից յուրաքանչյուրը ներկայացրեց, թե ինչ փուլում են գտնվում աշխատանքները, և մինչ այս պահին ով ինչ աշխատանք է կատարել «Երիտասարդության ծայնը հանուն զարգացման և փոփոխությունների» հայ-վրացական միջսահմանային ծրագրի շրջանակներում:



Երկօրյա դասընթացի առաջին օրվա ավարտին ծրագրի ղեկավարները գնահատեցին առաջարկված գաղափարներն ու տեսակետները և հստակություն մտցրեցին գործողությունների պլանի մեջ:



